# ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

**Օձուն համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ**

| **Համայնքը** | **Միջոցառման անվանումը** | **Օրը** | **Ժամը** | **Անցկացման վայրը** |
|---|---|---|---|---|
| **Օձուն** | Ավագանու հերթական նիստ | 24.09.2020թ. | 15:00 | Օձունի համայնքապետարան, համայնքի ղեկավարի աշխատասենյակ (ՀՀ Լոռու մարզ, գ .Օձուն, 6-րդ փողոց, շենք 10) |

# ՕՐԱԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

*1ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-112-0037-0057,06-020-0118-0267, 06-014-0308-0053,06-048-0575-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

3.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-014-447-0012 ԵՎ 06-112-0447-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*4.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 19 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 46-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.*

*5.ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.*

*6.ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՍՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.*

**ՆԱԽԱԳԻԾ**

(հեղինակ՝ համայնքի ղեկավար Ա. Տիտանյան,
զեկուցող՝ համայնքի ղեկավար Ա. Տիտանյան)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**24 սեպտեմբերի 2020 թվական, N -Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ, 10-րդ և 12-րդ մասերի, 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 16-րդ և 17-րդ հոդվածների՝

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 24-ի տասնվեցերորդ արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝**

**Կողմ ( )** **Դեմ ( )** **Ձեռնպահ ( )**

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ
Ա. ԱՊՐԵՍՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Ա. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Մ. ԽԵՉՈՒՄՅԱՆ
Ա. ՂԱՐԻԲՅԱՆ
Ա. ՄՈՍԻՆՅԱՆ
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

**2020թ., սեպտեմբերի 24**
**ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն**

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու
2020 թվականի սեպտեմբերի 24-ի N -Ա որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

*1ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-112-0037-0057,06-020-0118-0267, 06-014-0308-0053,06-048-0575-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

3.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-014-447-0012 ԵՎ 06-112-0447-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*4.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 19 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 46-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.*

*5.ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.*

*6.ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՍՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

**ՆԱԽԱԳԻԾ**

(հեղինակ՝ Հ.Գալստյան,
զեկուցող՝ համայնքի ղեկավար Ա. Տիտանյան)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**24 սեպտեմբերի 2020 թվականի, N -Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-112-0037-0057, 06-020-0118-0267, 06-014-0308-0053, 06-048-0575-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի , 47-րդ և 51-րդ հոդվածների՝

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի *Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

Հիմք ընդունելով Օձուն համայնքի ղեկավարի առաջարկությունը.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող (Սեփականության վկայական N 28082020-06-0038, Գաղտնաբառ՝ INBKYWFAPAS3), Օձուն համայնքի, Օձուն գյուղի փողոց 5 թիվ 5/21 հասցեում գտնվող, Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-112-0037-0057 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.00392 հեկտար մակերեսով հողամասը, հասարակական օբյեկտ կառուցելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել հարյուր իննսուն հազար (190000) ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար ՝հինգ հազար (5 000) ՀՀ դրամ:

2. Համայնքային սեփականություն հանդիսացող, Օձուն համայնքի, Այգեհատ գյուղում գտնվող, Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-014-0308-0053 կադաստրային ծածկագրով, (Սեփականության վկայական N 26052020-06-0029, Գաղտնաբառ՝ IUDFIPTXZGST)

գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողի հողատեսքի, 1.50276 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել մեկ միլիոն ութ հարյուր երեք հազար երեք հարյուր տասներկու (1803312) ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար հինգ հազար (5 000) ՀՀ դրամ:

3. Համայնքային սեփականություն հանդիսացող, Օձուն համայնքի, Արևածագ գյուղում գտնվող, Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-020-0118-0267 կադաստրային ծածկագրով, (Սեփականության վկայական N 11092020-06-0043, Գաղտնաբառ՝ HMNNEHY5RU8P) գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայրի հողատեսքի, 0.2003 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել երեք հարյուր հազար (300000) ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար հինգ հազար (5 000) ՀՀ դրամ:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող, Օձուն համայնքի, Այգեհատ գյուղում գտնվող, Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-014-0310-0121 կադաստրային ծածկագրով, (Սեփականության վկայական N 08072020-06-0050, Գաղտնաբառ՝ TLHIDVCAHLTU) գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողի հողատեսքի, 3.00002 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել երեք միլիոն վեց հարյուր հազար քսանչորս (3600024) ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար հինգ հազար (5 000) ՀՀ դրամ:

5. Համայնքային սեփականություն հանդիսացող, Օձուն համայնքի, Ծաթեր գյուղում գտնվող, Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-048-0575-0007 կադաստրային ծածկագրով, (Սեփականության վկայական N 16072020-06-0041, Գաղտնաբառ՝ G1MT2JEQFIEB) գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսքի, 0.03967 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել երկու հարյուր հազար (200000) ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար հինգ հազար (5 000) ՀՀ դրամ:

6. Հողամասերը չեն գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

7. Հողամասերի օտարումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:

8. Օձուն համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և իրականացնել որոշմամբ սահմանված հողամասերի աճուրդը:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Կողմ ( )** **Դեմ ( )** **Ձեռնպահ ( )**

**Տ. ԱՂՎԱՆՅԱՆ**
**Ա. ԱՊՐԵՍՅԱՆ**
**Ս. ԱՍՐՅԱՆ**
**Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ**
**Ա. ԴԱՎԹՅԱՆ**
**Գ.ԹՈՐՈՍՅԱՆ**
**Մ. ԽԵՉՈՒՄՅԱՆ**
**Ա. ՂԱՐԻԲՅԱՆ**
**Ա. ՄՈՍԻՆՅԱՆ**
**Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ**
**Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

**2020թ.,24 սեպտեմբերի**
**ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք,.գ. Օձուն**

**ՆԱԽԱԳԻԾ**

(հեղինակ՝ Հ. Գալստյան,
զեկուցող՝ համայնքի ղեկավար Ա. Տիտանյան)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**24 սեպտեմբերի 2020 թվական, N -Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-112-0059-0006 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 18-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 51-56-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 129-րդ, 135-րդ, 163-րդ, 166-րդ, 169-րդ, 202-րդ հոդվածներով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի (այսուհետ՝ համայնք) կազմի մեջ մտնող Օձուն բնակավայրի կադաստրային քարտեզի 06-112-0059-0006 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.04346 հեկտար մակերեսով հողամասի նկատմամբ վերականգնել համայնքի սեփականության իրավունքը՝ այն ճանաչելով համայնքային սեփականություն:

2. Սույն որոշման առաջին կետով սահմանված հողամասը (այսուհետ՝ հողամասեր) չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

1) Հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:

3. Հողամասի սահմանները որոշվում են որակավորված անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով և այն հանդիսանում է սույն որոշման բաղկացուցիչ և անբաժանելի մասը:

4. Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

5. Համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում կազմակերպել և իրականացնել հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու հետ կապված աշխատանքները:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝**

**Կողմ ( )** **Դեմ ( )** **Ձեռնպահ ( )**

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ
Ա. ԱՊՐԵՍՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Ա. ԴԱՎԹՅԱՆ
Գ.ԹՈՐՈՍՅԱՆ
Մ. ԽԵՉՈՒՄՅԱՆ
Ա. ՂԱՐԻԲՅԱՆ
Ա. ՄՈՍԻՆՅԱՆ
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

**2020թ.սեպտեմբերի 24 ,**
**ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն**

**ՆԱԽԱԳԻԾ**

(հեղինակ՝ Հ. Գալստյան,
զեկուցող՝ համայնքի ղեկավար Ա. Տիտանյան)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**24 սեպտեմբերի 2020 թվական, N -Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-014-0447-0012 ԵՎ 06-112-0447-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 10-րդ, 11-րդ, 128-րդ, 129-րդ, 169-րդ, 464-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի, 77-րդ և 80-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ, 35-րդ, հոդվածների, 56-րդ հոդվածի առաջին, հինգերորդ և ութերորդ մասերի, 57-րդ հոդվածի առաջին, երկրորդ և յոթերորդ մասերի, 76-րդ, 77-րդ, 78-րդ, հոդվածների՝

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

հիմք ընդունելով Օձուն համայնքի ղեկավարի առաջարկությունը.

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով ու համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայով սահմանված նպատակներին, հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերին համապատասխան, համայնքային սեփականություն հանդիսացող, Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-112-0447-0012 ծածկագրով (Սեփականության վկայական Թիվ 16092020-06-0052, Գաղտնաբառ՝ E4IGXB7GKLHC) գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայրի հողատեսքի 0,23119 հեկտար մակերեսով հողամասը (այսուհետ՝ հողամաս) օրենսդրությամբ չարգելված նպատակներով օգտագործելու համար՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, վարձակալության իրավունքով տրամադրել ժամանակավոր օգտագործման:

Հողամասը վարձակալության իրավունքով ժամանակավոր օգտագործման տրամադրել հրապարակային սակարկություններով՝ բաց մրցույթով, որին կարող է մասնակցել ցանկացած անձ:

Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային չափը սահմանել տասնյոթ հազար (17000) ՀՀ դրամ:

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով ու համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայով սահմանված նպատակներին, հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերին համապատասխան, համայնքային սեփականություն հանդիսացող, Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-112-0447-0011 ծածկագրով (Սեփականության վկայական Թիվ 16092020-06-0054, Գաղտնաբառ՝ FXRANCS7SG83) գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայրի հողատեսքի 0,57802 հեկտար մակերեսով հողամասը (այսուհետ՝ հողամաս) օրենսդրությամբ չարգելված նպատակներով օգտագործելու համար՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, վարձակալության իրավունքով տրամադրել ժամանակավոր օգտագործման:

Հողամասը վարձակալության իրավունքով ժամանակավոր օգտագործման տրամադրել հրապարակային սակարկություններով՝ բաց մրցույթով, որին կարող է մասնակցել ցանկացած անձ:

Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային չափը սահմանել տասնյոթ հազար (27000) ՀՀ դրամ:

3. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

1) Հողամասի վարձակալությամբ իրավունքով տրամադրումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը, ինչպես նաև չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմաը:

2)Հողամասը վարձակալությամբ իրավունքով տրամադրելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և հողային օրենսդրությամբ սահմանված այլ սահմանափակումներ չկան, ինչպես նաև համայնքի հողերի օգտագործման սխեմայով այն նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար:

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարին՝

1) Հողամասի վարձակալության իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթի կազմակերպման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծել մրցութային հանձնաժողով և գլխավորել այն, ինչպես նաև սահմանել մրցույթի պայմանները (հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը, հողամասի չափը և վարձակալության ժամկետը, հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը,

վճարի մեկնարկային չափը, օգտագործման նպատակը, հաղորդակցուղիների առկայությունը, հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը, հողի որակական հատկանիշները, ագրոտեխնիկական պահանջները, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները, կարող է սահմանել նաև լրացուցիչ այլ պահանջներ ու պայմաններ):

2) Մրցույթում լավագույն պայմանները ճանաչելու և մրցույթի մասնակիցների կողմից մրցութային պայմանների բավարարման աստիճանը գնահատելու նպատակով սահմանել մրցութային պայմանները միասնական կշռային գործակցով գնահատելու մեթոդ:

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում կազմակերպել և իրականացնել հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրելու նպատակով անցկացվող մրցույթը, որի մասին ընդունել համապատասխան իրավական ակտ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ապահովել մրցույթի անցկացման մասին հայտարարության հրապարակումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝**

**Կողմ ( )** **Դեմ ( )** **Ձեռնպահ ( )**

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ
Ա. ԱՊՐԵՍՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Ա. ԴԱՎԹՅԱՆ
Գ.ԹՈՐՈՍՅԱՆ
Մ. ԽԵՉՈՒՄՅԱՆ
Ա. ՂԱՐԻԲՅԱՆ
Ա. ՄՈՍԻՆՅԱՆ
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

**2020թ., սեպտեմբերի 24,**
**Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն**

**ՆԱԽԱԳԻԾ**

(հեղինակ՝ Հ. Գալստյան,
զեկուցող՝ համայնքի ղեկավար Ա. Տիտանյան)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**24 սեպտեմբերի 2020 թվականի, N -Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 19 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 46-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով, 34-րդ հոդվածով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ, 21-րդ կետերով,

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի *Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

Հիմք ընդունելով Օձուն համայնքի ղեկավարի առաջարկությունը, Օձուն համայնքի ավագանու,

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-112-0437-0152 ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ, 06-112-1096-0002 ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ԵՎ 06-112-0062-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ», 19 օգոստոսի 2020 թվականի թիվ 46-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1. 1- 1.2 կետի «0.029»-ը փոխարինել «0.02795» թվերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Կողմ ( )** **Դեմ ( )** **Ձեռնպահ ( )**

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ
Ա. ԱՊՐԵՍՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Ա. ԴԱՎԹՅԱՆ
Գ.ԹՈՐՈՍՅԱՆ
Մ. ԽԵՉՈՒՄՅԱՆ
Ա. ՂԱՐԻԲՅԱՆ
Ա. ՄՈՍԻՆՅԱՆ
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2020թ., սեպտեմբերի 24
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք,գ. Օձուն

**ՆԱԽԱԳԻԾ**

(հեղինակ՝ Ա. Թարմնյան,
զեկուցող՝ համայնքի ղեկավար Ա. Տիտանյան)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**24 օգոստոսի 2020 թվականի , N**

## ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՍՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ,,Տեղական ինքնակառավարման,, մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության ,,Հարկային օրենսգրքի,, 19-րդ հոդվածի, ,,Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. մայիսի 19-ի N 300 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին,, N 822-Ն որոշման

Հիմք ընդունելով քաղաքացու դիմումը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի եզրակացությունը և կարծիքը

1. Սասուն Հովհաննիսյանի նկատմամբ սահմանել հարկային արտոնություն, համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

**Կողմ ( )** **Դեմ ( )** **Ձեռնպահ ( )**

**Տ. ԱՂՎԱՆՅԱՆ**

Ա. ԱՊՐԵՍՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Ա. ԴԱՎԹՅԱՆ
Գ.ԹՈՐՈՍՅԱՆ
Մ. ԽԵՉՈՒՄՅԱՆ
Ա. ՂԱՐԻԲՅԱՆ
Ա. ՄՈՍԻՆՅԱՆ
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2020թ., սեպտեմբերի 24
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք,գ. Օձուն

**ՆԱԽԱԳԻԾ**

(հեղինակ՝ Ա. Թարմինյան,
զեկուցող՝ համայնքի ղեկավար Ա. Տիտանյան)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**24 սեպտեմբերի 2020 թվականի, N-**

***ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Համաձայն ,,Տեղական ինքնակառավարման,, մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության ,,Հարկային օրենսգրքի,, 19-րդ հոդվածի, ,,Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. մայիսի 19-ի N 300 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին,, N 822-Ն որոշման Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է

Հիմք ընդունելով քաղաքացու դիմումը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի եզրակացությունը և կարծիքը

1. Ռոման Գևորգյանի նկատմամբ սահմանել հարկային արտոնություն, համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

**Կողմ ( )** **Դեմ ( )** **Ձեռնպահ ( )**

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ
Ա. ԱՊՐԵՍՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ

Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Ա. ԴԱՎԹՅԱՆ
Գ.ԹՈՐՈՍՅԱՆ
Մ. ԽԵՉՈՒՄՅԱՆ
Ա. ՂԱՐԻԲՅԱՆ
Ա. ՄՈՍԻՆՅԱՆ
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2020թ., սեպտեմբերի 24
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք,գ. Օձուն